

Հայոց կաթողիկոսն՝ Միքայէլ Պետրոս Գ. Գաս-
 պարեան 1755ին Ս. Ժողովոյ հրամանաւ զինքն
 Ամդայ (Տիգրանակերտի) Արքեպս. ձեռնադրեց
 եւ 1758ին հետը Հռոմ տարաւ (Աղեքս.
 Ա. 11) ուր կաթողիկոսին հետ երկու տարի
 մնալէն ետեւ՝ դարձաւ հետն, մնաց ի Բերիա
 (— Աղեքս. էջ 28 եւ Ա. էջ 45 շփոթմամբ
 զատ անձ մը կը դնէ՝ «Յովհ. Ա. Ամդեցի
 ձեռնադրեցաւ ի վերայ Զմիւռնիոյ», որ նոյն
 անձն է մելիին հետ՝ որ է Զմիւռնացի, ձեռնա-
 դրեալ ի վերայ Ամդայ —): Յետոյ, անշուշտ
 1763էն ետեւ՝ երբ տեղւոյն ի ծածուկ հայ
 կաթողիկեայ Արքեպիսկոպոսն Արրահամ Նուր-
 տինեան՝ Յովհ. Ա. Նուրտինեանի մօրեղբայրն
 վախճանեցաւ, Ամիդ գնաց եւ քիչ մ'ատեն
 հօտն հովուեց: Սակայն հակառակորդ ժողո-
 վուրդն իրեն դէմ հալածանք հանեց եւ զինք
 վտարեց: Յովհ. Արքեպս. այս միջոցին գանուած
 պիտի ըլլայ ի Գաղատիա, ինչպէս վերն յիշա-
 տակիցինք: Այնուհետեւ հաստատուեցաւ ի
 Կ.Պոլիս եւ այստեղ վախճանեցաւ: Մահուան
 թուականն անծանօթ է, սակայն ունինք իր մա-
 սին քանի մը տեղեկութիւններ: 1785 Մայիս
 1ին Կ.Պոլսոյ հայ կաթողիկեայ կղերն Եղբայ-
 րութիւն մը հաստատած էր՝ հայ կաթողիկեայ
 եկեղեցականի մը մահուանէն ետեւ՝ անոր հոգ-
 ւոյն համար Պատարագ մատուցանելու: Ասոր
 տակը՝ ուրիշ երկու եպիսկոպոսներու հետ կը
 ստորագրէ նաեւ «Յօհաննէս ազարիան Եպսկս.
 զմիւռնացի», Գարձեալ Յովհ. Արքեպ. 1797